ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Միրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Մաղթում ենք հաջողություն:

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Մի վիթխարի մարդ՝ խարտյաշ մորուքով, բարձրահասակ ու ջլապինդ, մտավ խանութ: 2. Նա իջել էր շրջակա բլուրներից՝ թակարդ գնելու:

3. Խանութպանն անմիջապես սկսեց նրան ցույց տալ մի մեծ և բարդ կառուցվածքի թակարդ, որը վերջերս հնարել էր մի օտարերկրացի:

4. -Վերջին գյուտերից է,- ասաց խանութպանը,- գազանին բռնում է առանց վնասելու, բարձրացնում և անշարժ պահում մինչև որսորդի գալը: 5. Հորինողը դիմել է գյուտարարության գրասենյակ՝ մենաշնորհի իրավունք ստանալու համար, և առայժմ երկու օրինակ է միայն սարքել: 6. Թակարդներից մեկն ուղարկել է գրասենյակ, իսկ մյուսը տվել է ինձ՝ վաճառելու:

7. Հաճախորդը լսում էր երեխայի հափշտակությամբ: 8. Նրա հետևում կանգնած էր փոքրիկ Յուլիսիսը, որը լսում էր նույն հափշտակությամբ: 9. Նա գլուխը մտցրել էր երկու մարդկանց արանքը՝ թակարդն ավելի լավ տեսնելու համար:

II

1. Շուտով փոքրիկն այնքան մոտեցավ, որ թակարդը մեղմ, բայց արագ նրան բռնեց, բարձրացրեց, շուռ տվեց և պահեց գլխիվայր: 2. Տղան ոչ մի ձայն չհանեց, թեև մի քիչ այլայլվեց:

3. -Զգո՛ւյշ,- բղավեց հաճախորդը,- նայե՛ք, որ Ձեր որդին չվնասվի:

4. -Իմ որդի՞ն,- զարմացավ խանութպանը,- կարծում էի, որ նա Ձեր որդին է: 5. Կյանքումս չեմ տեսել այդ տղային: 6. Նա Ձեզ հետ ներս մտավ:

7. -Ճի՞շտ,- ասաց հաճախորդը,- չնկատեցի: 8. Ինչ որ է, շտապե՛ք: 9. Նրան թակարդից դո՛ւրս հանեք, խնդրում եմ:

10. -Անունդ ի՞նչ է, մանչո՛ւկ,- դառնալով տղային՝ հարցրեց հաճախորդը՝ բլուրներից իջած մարդը:

11. -Յուլիսիս:

12. -Իմ անունը Քրիս է. մի քիչ համբերի՛ր, մի՛ վախեցիր, այս մարդը քեզ հիմա դուրս կհանի այդտեղից:

III

1. -Լավ չեմ հիշում, թե գյուտարարն ինչպես բացատրեց, նա չփորձարկեց թակարդը, հասկանո՞ւմ եք, որովհետև... մի խոսքով, ոչ մի գազան չունեինք փորձարկման համար:

2. Խանութպանը թակարդի տարբեր մասերն էր քաշքշում՝ հույս ունենալով, թե որևէ մաս կշարժվի:

3. -Շտապի՛ր,- ասաց Քրիսը,- հո չի՞ կարելի ամբողջ օրը երեխային օդում գլխիվայր պահել: 4. Չի ցավում, չէ՞, Յուլիսի՛ս:

5. -Ո՛չ:

6. -Քանի՞ տարեկան ես:

7. -Չորս:

8. -Ուրեմն ես քեզնից հիսուն տարով մեծ եմ:

9. Ապա հարցրեց խանութպանին.

-Գտա՞ք բացելու ձևը:

10. -Դեռ ոչ, բայց կգտնեմ: 11. Գյուտարարը բացատրեց, թե ինչպես պետք է գազանին դուրս հանել թակարդից, բայց միգուցե ամեն ինչ փոխվում է, երբ գազանի փոխարեն փոքր երեխա է թակարդն ընկնում:

IV

1. Քրիսը ևս սկսեց տենդորեն զբաղվել թակարդով:

2. -Դուք կոտրում եք թակարդը,- բղավեց խանութպանը,- ոչնչացնում, իսկ դա իր տեսակի մեջ միակն է ամբողջ աշխարհում: 3. Չհամարձակվեք կոտրել այն: 4. Դուք մի մեծ գյուտ եք ջարդում: 5. Գուցե նա այլևս չկարողանա դրա նման մի ուրիշը սարքել: 6. Երեխան իրեն շատ լավ է զգում. նա անվնաս է: 7. Ես կգտնեմ գյուտարարին. դա շատ-շատ մեկ կամ երկու ժամ կտևի:

8. -Մեկ կամ երկու ժա՞մ,- բղավեց Քրիսը և աշխարհի ամենասարսափելի հայացքով նայեց խանութպանին,- ամբողջ այս խանութը ջարդուփշուր կանեմ:

9. Յուլիսիսը շուռ եկած դիտում էր այդ մարդուն: 10. Վերջապես Քրիսը կոտրեց թակարդը:

11. Յուլիսիսը փրկվեց:

12. -Իսկ ո՞վ պետք է վճարի,- ասաց խանութպանը,- գործիքը ջարդվել է:

13. Առանց որևէ խոսքի՝ Քրիսը փող հանեց, հաշվեց, նետեց սեղանի վրա, շոյեց Յուլիսիսի մազերը և դուրս եկավ:

1 Ինչպե՞ս է խանութպանը մեկնաբանում, թե ինչու գյուտարարն իր մոտ թակարդը չփորձարկեց:

1) Գյուտարարը շտապում էր գրասենյակ:
2) Վախենում էր, որ որևէ բան կկոտրի:
3) Այդ պահին գազան չկար:
4) Նա մենաշնորհի իրավունք դեռ չէր ստացել:

2 Տեքստում հետևյալ արտահայտություններից ո՞րը Քրիսի վերաբերյալ *չի* գործածվել:

1) ամենասարսափելի հայացքով նայել
2) բլուրներից իջնել
3) լսել երեխայի հափշտակությամբ
4) ձայն չհանել, բայց այլայլվել

3 Ո՞ր բառում ուղղագրական սխալ կա:

1) հեծանվորդ
2) գործուղղում
3) միջանցք
4) հարցուփորձ

4 Ո՞ր բառում հնչյունափոխություն *չկա:*

1) գրասենյակ
2) օտարերկրացի
3) հաճախորդ
4) անմիջապես

5 Ո՞ր բառի կամ բառաձևի շեշտն է վերջին վանկի վրա:

1) անունը
2) պար գալ
3) միգուցե
4) հիսուն

6 Ո՞ր բառաձևի բոլոր վանկերն են բաց:

1) մենաշնորհի
2) գյուտարարի
3) խանութպանը
4) թակարդի

7 Ո՞ր բառում ածանց ***չկա:***

1) շրջակա
2) որսորդ
3) անվնաս
4) տենդորեն

8 Տեքստում ո՞ր բառի հոմանիշը ***չկա:***

1) խրթին
2) հսկա
3) ամրակազմ
4) անաչառ

9 Ո՞րն է ***հափշտակվել*** բառին հոմանիշ:

1) զմայլվել
2) գգվել
3) շփոթվել
4) սթափվել

10 Ո՞ր բառն է բարդաձանցավոր:

1) փորձարկում
2) մենաշնորհ
3) կառուցվածք
4) ջարդուփշուր

11 Ո՞ր նախադասության մեջ ***ու*** հոլովման ենթարկվող գոյական կա:

1) I. 7
2) II. 2
3) IV. 13
4) I. 1

12 Ո՞ր դերանվան դիմաց է տեսակը սխալ նշված:

1) ***ոչ մի*** – ժխտական
2) ***որևէ*** – ցուցական
3) ***ամբողջ*** – որոշյալ
4) ***իրեն*** –անձնական

13 I հատվածի ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ ***չկա:***

1) 1
2) 2
3) 3
4) 4

14 IV. 12 նախադասության մեջ ո՞ր ժամանակաձևով դրված ստորոգյալ ***չկա:***

1) անցյալ կատարյալ
2) հարկադրական ապառնի
3) վաղակատար անցյալ
4) վաղակատար ներկա

15 Նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

Շուտով փոքրիկն այնքան մոտեցավ, որ թակարդը մեղմ, բայց արագ նրան բռնեց, բարձրացրեց, շուռ տվեց և պահեց գլխիվայր:

1) ***արագ*** – ձևի մակբայ
2) ***բայց*** – ստորադասական շաղկապ
3) ***մոտեցավ*** – սոսկածանցավոր բայ
4) ***նրան*** – 3-րդ դեմքի անձնական դերանուն

16 I հատվածի ո՞ր նախադասությունն է պարզ:

1) 3
2) 5
3) 1
4) 6

17 Ո՞ր նախադասության մեջ ենթակա կա:

1) I. 6
2) III. 4
3) II. 5
4) III. 8

18 Ո՞ր կապակցության մեջ կապ խոսքի մաս ***չկա:***

1) դրա նման
2) Ձեզ հետ
3) ցույց տալ
4) ստանալու համար

19 II. 1 նախադասության մեջ ինչպիսի՞ պարագա ***չկա:***

1) ձևի
2) տեղի
3) չափի
4) ժամանակի

20 Նախադասության անդամներից որի՞ շարահյուսական պաշտոնն է սխալ նշված:

Հորինողը դիմել է գյուտարարության գրասենյակ՝ մենաշնորհի իրավունք ստանալու համար, և առայժմ երկու օրինակ է միայն սարքել:

1) ***դիմել է*** – բաղադրյալ ստորոգյալ
2) ***օրինակ*** – ուղիղ խնդիր
3) ***ստանալու համար*** – նպատակի պարագա
4) ***հորինողը*** – ենթակա

21 Տեքստից դո՛ւրս գրիր մեկ բառ, որում ***ու*** -ի սղում կա:

Պատասխան՝----------

22 Տեքստից դո՛ւրս գրիր մեկ բառ, որում հնչյունների քանակը ավելին է, քան տառերինը (տառերից մեկը մեկից ավելի հնչյունի գրային նշան է):

Պատասխան՝ ----------

23 Գրի՛ր մեկ բառ կամ բառաձև, որում ***յ*** ձայնակապը լսվում է, բայց չի գրվում:

Պատասխան՝ ----------

24 Տեքստի ո՞ր բառն է նշանակում ***հուզվել, շփոթվել:***

Պատասխան՝----------

25 Տեքստից դո՛ւրս գրիր ***արմատ+արմատ+ածանց (առանց հոդակապի)*** կազմություն ունեցող մեկ բառ:

Պատասխան՝----------

26 Տեքստից դո՛ւրս գրիր ***շրջվել*** -ին համարժեք հարադրավոր բայը:

Պատասխան՝ ----------

27 I հատվածից դո՛ւրս գրիր ցուցական հոդով բառը:

Պատասխան՝----------

28 I հատվածի 1-6 նախադասություններից դո՛ւրս գրիր գործիական հոլովով դրված բառը:

Պատասխան՝----------

29 III հատվածից դո՛ւրս գրիր բազմապատկական բայը:

Պատասխան՝ ----------

30 I հատվածից դո՛ւրս գրիր այն բաղադրյալ ստորոգյալը, որի ստորոգելին արտահայտված է գոյականով:

Պատասխան՝----------

31 II հատվածից դո՛ւրս գրիր արգելական հրամայականով դրված բայը:

Պատասխան՝----------

32 Տեքստից դո՛ւրս գրիր գերադրական աստիճանով դրված ածականը:

Պատասխան՝----------

33 IV. 1-7 նախադասություններից դո՛ւրս գրիր այն բառը, որը հանդես է եկել որպես միջոցի անուղղակի խնդիր:

Պատասխան՝ ----------

34 II. 1 բարդ նախադասությունը քանի՞ պարզ նախադասությունից է բաղկացած:

Պատասխան՝ ----------

35 I. 1 նախադասության մեջ բութը ինչի՞ համար է դրված:

Պատասխան՝----------

36 Ինչպիսի՞ մարդ էր Քրիսը. հիմնավորի՛ր քո պատասխանը:

Մտքերդ շարադրի՛ր 50-70 բառով:

(սևագրություն)